

ՈՒՂԵՑՈՒՅՑ

**ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ՓՈԽԱԴԻՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԿԱՐԳՈՎ
ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	
3	
1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	4
2.ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ	
5	
3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՓՈԽԱԴՈՒՄԸ	9
4.ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼԸ	16
5.ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ	24
6. ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ուղեցույցը կազմվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից՝ «Քաղաքացիական ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-205-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) հիման վրա:

Ուղեցույցը մշակվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղափոխման, փոխադրման և գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու ինստիտուտներն առաջին անգամ են ներդրվում քաղաքացիական ծառայության համակարգում, ուստի սույն ուղեցույցի նպատակն է օժանդակել համապատասխան մարմիններին տեղափոխման, փոխադրման և գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու գործընթացներն առավել արդյունավետ իրականացնելու և Օրենքով նախատեսված կարգավորումները միատեսակ կիրառելու համար:

Տեղափոխման կամ փոխադրման կամ գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելն ինքնանպատակ չէ. համապատասխան մարմինը, հաշվի առնելով կառուցվածքային ստորաբաժանումներում առկա իրավիճակը՝ աշխատանքային ծանրաբեռնվածությունը, համապատասխան կրթություն ունեցող անձի անհրաժեշտությունը, կարող է քաղաքացիական ծառայության հավասարազոր պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների միջև իրականացնել տեղափոխման կամ փոխադրման կամ գործուղման կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու գործընթացներ: Տեղափոխման կամ փոխադրման կամ գործուղման կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու գործընթացները հնարավորություն են տալիս համապատասխան մարմնի գործառույթներից բխող աշխատանքներն առավել արդյունավետ, ժամանակին կազմակերպելու և իրականացնելու, իսկ տեղափոխման կամ փոխադրման կամ գործուղման կարգով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական

ծառայողների համար այն փորձ ձեռք բերելու կամ գիտելիքները, փորձը փոխանցելու հնարավորություն է, քանի որ տեղափոխվելով, փոխադրվելով այլ կառուցվածքային ստորաբաժանում կամ գործուղվելով այլ համապատասխան մարմին, քաղաքացիական ծառայողը հմտանում է նաև այդ կառուցվածքային ստորաբաժանման կամ համապատասխան մարմնի առանձնահատուկ գործառույթների իրականացման մեջ, զարգացնում, կատարելագործում է կոմպետենցիաները, ինչպես նաև իր փորձն է փոխանցում այն համապատասխան մարմնին, որտեղ գործուղվել է:

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուղեցույցում գործածվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

Հավասարազոր պաշտոն՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում քաղաքացիական ծառայության պաշտոնի համապատասխան խմբի նույն ենթախմբում ընդգրկված քաղաքացիական ծառայության պաշտոն:

Տեղափոխման կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը՝ մինչև երկու տարի ժամկետով կառուցվածքային ստորաբաժանումների հավասարազոր քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների միջև տեղափոխությունն է:

Փոխադրման կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը՝ նույն կամ այլ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողին նույն կամ այլ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայության թափուր կամ ժամանակավոր թափուր պաշտոնին փոխադրումն է կամ կառուցվածքային ստորաբաժանման մասնագիտական պաշտոնների խմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողին իր պաշտոնով այլ կառուցվածքային ստորաբաժանում փոխադրումն է:

Գործուղման կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը՝ մինչև երեք տարի ժամկետով համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողին այլ համապատասխան մարմին թափուր կամ ժամանակավոր թափուր պաշտոնին գործուղելն է:

2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացիական ծառայողների տեղափոխություն կատարելու համար համապատասխան մարմնում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը մինչև երկու տարի ժամկետով՝ պատճառաբանված որոշմամբ կարող է տեղափոխություն կատարել կառուցվածքային ստորաբաժանումների հավասարազոր քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների միջև, եթե այդ քաղաքացիական ծառայողները բավարարում են տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի պահանջները: Այսինքն՝ տեղափոխությունը կատարվում է նույն համապատասխան մարմնի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների միջև՝ մինչև երկու տարի ժամկետով:

Օրինակ՝

ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄ

(ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ)

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) միջազգային վիճակագրական համագործակցության բաժինը իրականացրել է միջազգային և արտասահմանյան կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքներ, վիճակագրական տեղեկատվություն է տրամադրել միջազգային կազմակերպություններին, արտասահմանյան երկրների վիճակագրական ծառայություններին, և նրանցից ստացել վիճակագրական անհրաժեշտ տեղեկատվություն: Միջազգային կազմակերպություններից, արտասահմանյան երկրների վիճակագրական ծառայություններից ստացած

վիճակագրական տեղեկատվության հիման վրա անհրաժեշտություն է առաջացել մշակել միջազգային համագործակցության համաձայնագրերի և պայմանագրերի նախագծեր: Միջազգային համագործակցության համաձայնագրերի և պայմանագրերի նախագծերը մշակելու համար Կոմիտեի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնում անհրաժեշտ է իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետ:

Կոմիտեի իրավաբանական բաժինն իրականացնում է Կոմիտեի անունից կնքվող պայմանագրերի՝ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների համապատասխանության ապահովումը, և այդ աշխատանքների արդյունավետորեն իրականացնելու նպատակով Կոմիտեի իրավաբանական բաժնում անհրաժեշտ է միջազգային ոլորտի փորձ ունեցող մասնագետ:

Վերոնշյալ կառուցվածքային ստորաբաժանումներում առկա իրավիճակը և աշխատանքային ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է վիճակագրական կոմիտեի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր վիճակագիր (պաշտոնի ծածկագիրը) Անահիտ Հայկի Ստեփանյանին վեց ամիս ժամկետով տեղափոխել վիճակագրական կոմիտեի իրավաբանական բաժին, իսկ վիճակագրական կոմիտեի իրավաբանական բաժնի գլխավոր իրավաբան (պաշտոնի ծածկագիրը) Նարինե Նորիկի Ավետիսյանին վեց ամիս ժամկետով տեղափոխել վիճակագրական կոմիտեի միջազգային վիճակագրական համագործակցության բաժին:

Քաղաքացիական ծառայողների տեղափոխություն կատարելու նպատակով պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը հանձնարարական է տալիս անձնակազմի կառավարման ստորաբաժանմանը՝ տեղափոխության գործընթացն սկսելու վերաբերյալ: Անձնակազմի կառավարման ստորաբաժանումը, ստանալով համապատասխան հանձնարարականը մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և տեղափոխության ենթակա քաղաքացիական ծառայողներին՝ այդ քաղաքացիական ծառայողների գրավոր համաձայնությունը ստանալու նպատակով: Եթե քաղաքացիական ծառայողները տեղափոխության կարգով պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ գրավոր համաձայնություն չեն տալիս, ապա տեղափոխություն չի իրականացվում, իսկ եթե տեղափոխության ենթակա քաղաքացիական ծառայողները տալիս են

տեղափոխություն կատարելու մասին գրավոր համաձայնությունը, անձնակազմի կառավարման ստորաբաժանումը նախապատրաստում և պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հաստատմանն է ներկայացնում տեղափոխություն կատարելու մասին անհատական իրավական ակտի նախագիծը՝ կցելով նաև անհատական իրավական ակտի անբաժանելի մասը համարվող տեղափոխություն կատարելու պատճառաբանված որոշումը, քաղաքացիական ծառայողների գրավոր համաձայնությունները, քաղաքացիական ծառայողների կատարողականների գնահատման կամ հաշվետվությունների պատճենները:

Օրինակ՝

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական աջակցության վարչության ավագ սոցիոլոգ (պաշտոնի ծածկագիրը) Անահիտ Նորայրի Հակոբյանս, տալիս եմ իմ համաձայնությունը տեղափոխման կարգով նշանակվելու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերլուծության և մոնիթորինգի վարչության ավագ վերլուծաբանի պաշտոնին (պաշտոնի ծածկագիրը):

(ստորագրություն)

----- *(ամիս, ամսաթիվ)*

(անուն, ազգանուն)

Ստանալով տեղափոխություն կատարելու մասին անհատական իրավական ակտի նախագիծը՝ կից փաստաթղթերով, քաղաքացիական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը տեղափոխություն իրականացնելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ հաստատում է քաղաքացիական ծառայողների միջև տեղափոխություն իրականացնելու մասին անհատական իրավական ակտը: Տեղափոխության կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո առանց վերջնահաշվարկ կատարելու այդ քաղաքացիական ծառայողները զբաղեցնում են իրենց նախկին պաշտոնները:

Օրինակ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

ՀՐԱՄԱՆ N –Ա

ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով, ---կանոնադրության ---- կետով, հիմք ընդունելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական աջակցության վարչության ավագ սոցիոլոգ (պաշտոնի ծածկագիրը) Անահիտ Նորայրի Հակոբյանի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերլուծության և մոնիթորինգի վարչության ավագ վերլուծաբան (պաշտոնի ծածկագիրը) Մարինե Կարենի Վարդանյանի 2019 թվականի հունվարի 30-ի գրավոր համաձայնությունները՝

հրամայում եմ.

1. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական աջակցության վարչության ավագ սոցիոլոգ (պաշտոնի ծածկագիրը) Անահիտ Նորայրի Հակոբյանին 2019 թվականի հունվարի 30-ից տեղափոխման կարգով նշանակել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերլուծության և մոնիթորինգի վարչության ավագ վերլուծաբանի պաշտոնի (պաշտոնի ծածկագիրը)՝ մինչև 2020 թվականի փետրվարի 28-ը:

2. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերլուծության և մոնիթորինգի վարչության ավագ վերլուծաբան (պաշտոնի ծածկագիրը) Մարինե Կարենի Վարդանյանին 2019 թվականի հունվարի 30-ից տեղափոխման կարգով նշանակել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական աջակցության վարչության ավագ սոցիոլոգի (պաշտոնի ծածկագիրը) պաշտոնի՝ մինչև 2020 թվականի փետրվարի 28-ը:

(ստորագրություն)

---- (ամիս, ամսաթիվ)

(անուն, ազգանուն)

3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

Օրենքով նախատեսված են քաղաքացիական ծառայության պաշտոնը քաղաքացիական ծառայողի կողմից փոխադրման կարգով զբաղեցնելու հետևյալ դեպքերը՝

1)Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն առաջանալու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է նույն կամ այլ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողին յոթ աշխատանքային օրվա ընթացքում փոխադրել թափուր պաշտոնին, եթե վերջինս բավարարում է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի անձնագրի պահանջները: Այս դեպքում փոխադրվող քաղաքացիական ծառայողն իր դիմումի համաձայն ազատվում է զբաղեցրած պաշտոնից և փոխադրման կարգով նշանակվում է տվյալ թափուր պաշտոնում:

2)Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն առաջանալու դեպքում՝ մինչև սահմանված հիմքի վերացումը, պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է այլ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողին յոթ աշխատանքային օրվա ընթացքում փոխադրել այդ պաշտոնին, եթե վերջինս բավարարում է քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները: Ժամանակավոր թափուր պաշտոնի փոխադրման դեպքում փոխադրված քաղաքացիական ծառայողի պարտականությունները կատարում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողը: Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն առաջանալու հիմքի վերացումից հետո փոխադրված առանց վերջնահաշվարկ կատարելու քաղաքացիական ծառայողը զբաղեցնում է իր նախկին պաշտոնը:

Այս երկու դեպքերում քաղաքացիական ծառայության թափուր կամ ժամանակավոր թափուր պաշտոնն առաջանալու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը համապատասխան հանձնարարական է տալիս

անձնակազմի կառավարման ստորաբաժանմանը՝ փոխադրման գործընթացն սկսելու վերաբերյալ: Եթե պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը չի նշել կոնկրետ թեկնածու, ապա անձնակազմի կառավարման ստորաբաժանումը կազմում է տվյալ թափուր կամ ժամանակավոր թափուր պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող տվյալ մարմնի բոլոր թեկնածուների ցանկը, և տրամադրում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին: Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, ստանալով համապատասխան ցանկը, ընտրում է փոխադրման ենթակա քաղաքացիական ծառայողին, քննարկում համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի հետ և համապատասխան մակագրությամբ վերադարձնում է անձնակազմի կառավարման ստորաբաժանում:

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձից ստանալով համապատասխան հանձնարարականը՝ անձնակազմի կառավարման ստորաբաժանումը, մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է քաղաքացիական ծառայության թափուր կամ ժամանակավոր թափուր պաշտոնին փոխադրման ենթակա քաղաքացիական ծառայողին՝ վերջինիս գրավոր համաձայնությունը ստանալու համար: Եթե քաղաքացիական ծառայողը փոխադրման կարգով պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ չի տալիս համաձայնություն, ապա փոխադրում չի իրականացվում:

<p>Օրինակ՝</p> <p style="text-align: center;">ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ</p> <p><i>Ես՝ Ֆինանսների նախարարության ծախսերի ֆինանսավորման վարչության ավագ ֆինանսիստ (պաշտոնի ծածկագիրը) Անի Արամի Սահակյանս, տալիս եմ իմ համաձայնությունը փոխադրման կարգով նշանակվելու Ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության ավագ մասնագետի թափուր պաշտոնին (պաշտոնի ծածկագիրը):</i></p> <p style="text-align: center;">_____</p> <p style="text-align: center;">(ստորագրություն) ---- (ամիս, ամսաթիվ)</p> <p style="text-align: center;">_____</p> <p style="text-align: center;">(անուն, ազգանուն)</p>
--

Եթե քաղաքացիական ծառայողը փոխադրման կարգով պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ տալիս է գրավոր համաձայնություն, ապա անձնակազմի կառավարման ստորաբաժանումը նախապատրաստում է և պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հաստատմանն է ներկայացնում թափուր կամ ժամանակավոր թափուր պաշտոնին փոխադրելու մասին անհատական իրավական ակտի նախագիծը: Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը հաստատում է քաղաքացիական ծառայողին թափուր կամ ժամանակավոր թափուր պաշտոնի փոխադրելու մասին անհատական իրավական ակտը՝ պահպանելով Օրենքով սահմանված ժամկետները:

Օրինակ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

ՀՐԱՄԱՆ N -Ա

ՓՈԽԱԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով, ---կանոնադրության ---- կետով, հիմք ընդունելով Ֆինանսների նախարարության ծախսերի ֆինանսավորման վարչության ավագ ֆինանսիստ (պաշտոնի ծածկագիրը) Անի Արամի Սահակյանի գրավոր դիմումը և 2019 թվականի մարտի 15-ի գրավոր համաձայնությունը՝

հրամայում եմ.

1. 2019 թվականի մարտի 15-ից Ֆինանսների նախարարության ծախսերի ֆինանսավորման վարչության ավագ ֆինանսիստ (պաշտոնի ծածկագիրը) Անի Արամի Սահակյանին ազատել զբաղեցրած պաշտոնից և փոխադրման կարգով նշանակել Ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության ավագ մասնագետի թափուր պաշտոնի (պաշտոնի ծածկագիրը):

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

---- (ամիս, ամսաթիվ)

Օրինակ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՀՐԱՄԱՆ N -Ա
ՓՈԽԱԴԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով, ---կանոնադրության ---- կետով, հիմք ընդունելով Առողջապահության նախարարության միջազգային հարաբերությունների վարչության ավագ մասնագետ (պաշտոնի ծածկագիրը) Արամ Հայկի Կարապետյանի 2019 թվականի մարտի 15--ի գրավոր համաձայնությունը՝

հրամայում եմ.

1. Առողջապահության նախարարության միջազգային հարաբերությունների վարչության ավագ մասնագետ (պաշտոնի ծածկագիրը) Արամ Հայկի Կարապետյանին 2019 թվականի մարտի 15-ից փոխադրման կարգով նշանակել Առողջապահության նախարարության իրավաբանական վարչության ավագ իրավաբանի ժամանակավոր թափուր պաշտոնի (պաշտոնի ծածկագիրը)՝ մինչև հիմքի վերացումը:

2. Առողջապահության նախարարության միջազգային հարաբերությունների վարչության ավագ մասնագետ (պաշտոնի ծածկագիրը) Արամ Հայկի Կարապետյանի պարտականությունները կատարում է միջազգային հարաբերությունների վարչության ավագ մասնագետ (պաշտոնի ծածկագիրը) Կարինե Մանուկի Գեղամյանը (տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողը):

3. Ժամանակավոր թափուր պաշտոնի հիմքի վերացումից հետո Առողջապահության նախարարության միջազգային հարաբերությունների վարչության ավագ մասնագետ (պաշտոնի ծածկագիրը) Արամ Հայկի Կարապետյանին վերականգնել իր նախկին պաշտոնում:

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

---- (ամիս, ամսաթիվ)

3)Գլխավոր քարտուղարը, աշխատանքային ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով, կարող է կառուցվածքային ստորաբաժանման մասնագիտական պաշտոնների խմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողին իր համաձայնությամբ առանց ծառայությունը դադարեցնելու իր պաշտոնով փոխադրել այլ կառուցվածքային ստորաբաժանում: Տվյալ դեպքում քաղաքացիական ծառայողը իրականացնելու է նույնաբովանդակ աշխատանք, ինչպիսին իրականացնում էր մինչև փոխադրումը: Այս դեպքում պաշտոնի անձնագրում գործառույթների փոփոխություն չի կատարվում, այլ չափանիշներ և այլ պահանջներ չեն սահմանվում՝ բացառությամբ պաշտոնի անվան փոփոխության, ինչը կատարվում է օրենքով սահմանված կարգով անվանացանկի փոփոխության կատարումից հետո:

Կառուցվածքային ստորաբաժանման մասնագիտական պաշտոնների խմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողին իր պաշտոնով այլ կառուցվածքային ստորաբաժանում փոխադրելու նպատակով գլխավոր քարտուղարը համապատասխան հանձնարարական է տալիս անձնակազմի կառավարման ստորաբաժանմանը:

Գլխավոր քարտուղարից ստանալով համապատասխան հանձնարարականը՝ անձնակազմի կառավարման ստորաբաժանումը մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և փոխադրման ենթակա մասնագիտական պաշտոնների խմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողին՝ վերջինիս գրավոր համաձայնությունը ստանալու համար: Եթե մասնագիտական պաշտոնների խմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողը փոխադրման կարգով պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ չի տալիս համաձայնություն, ապա փոխադրում այլ կառուցվածքային ստորաբաժանում չի իրականացվում: Եթե քաղաքացիական ծառայողը տալիս է փոխադրման կարգով պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ համաձայնություն, ապա անձնակազմի կառավարման ստորաբաժանումը նախապատրաստում է անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու, ինչպես նաև պաշտոնի անձնագրում պաշտոնի անվանման փոփոխությամբ պայմանավորված համապատասխան փոփոխություն կատարելու վերաբերյալ առաջարկությունը՝ համապատասխան հիմնավորմամբ և ներկայացնում

գլխավոր քարտուղարին: Համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկում և պաշտոնի անձնագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունը հիմնավորման հետ միաժամանակ ներկայացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանը:

Օրինակ՝

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչությանն իրավական աջակցություն տրամադրելու և վարչության աշխատանքների բնականոն գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ է վարչության պաշտոնների անվանացանկում ներառել իրավաբանի քաղաքացիական ծառայության պաշտոն: Ֆինանսների նախարարության իրավաբանական վարչությունում առկա են իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող վեց իրավաբան, իրավաբանական վարչության աշխատողները լիարժեք կատարում են վարչության գործառույթներից բխող աշխատանքներն ու խնդիրները, իրավաբանական վարչության պաշտոնների անվանացանկից մեկ իրավաբանի քաղաքացիական ծառայության պաշտոն հանելը չի խաթարի վարչության բնականոն գործունեությունը, ուստի առաջարկում եմ՝

1. Ֆինանսների նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում կատարել փոփոխություն՝

իրավաբանական վարչության գլխավոր իրավաբանի (պաշտոնի ծածկագիրը) պաշտոնը փոխադրել ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչություն՝ որպես ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության գլխավոր իրավաբան պաշտոն:

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

---- (ամիս, ամսաթիվ)

Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունն ստանալուց հետո գլխավոր քարտուղարը փոփոխում է անվանացանկը և պաշտոնի անձնագիրը,

որից հետո անձնակազմի կառավարման ստորաբաժանումը նախապատրաստում է և գլխավոր քարտուղարի հաստատմանն է ներկայացնում փոխադրում կատարելու մասին անհատական իրավական ակտի նախագիծը: Գլխավոր քարտուղարը հաստատում է քաղաքացիական ծառայողին իր պաշտոնով այլ կառուցվածքային ստորաբաժանում փոխադրելու մասին անհատական իրավական ակտը:

Օրինակ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

ՀՐԱՄԱՆ N -Ա

ՓՈԽԱԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով, ---կանոնադրության ---- կետով, հիմք ընդունելով Արտակարգ իրավիճակների նախարարության ներքին աուդիտի վարչության գլխավոր աուդիտոր (պաշտոնի ծածկագիրը) Լարիսա Համլետի Գևորգյանի 2019 թվականի մարտի 11-ի գրավոր համաձայնությունը՝

հրամայում եմ.

1. Արտակարգ իրավիճակների նախարարության ներքին աուդիտի վարչության գլխավոր աուդիտոր (պաշտոնի ծածկագիրը) Լարիսա Համլետի Գևորգյանին 2019 թվականի մարտի 11-ից իր պաշտոնով փոխադրել Արտակարգ իրավիճակների նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչություն:

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

---- (ամիս, ամսաթիվ)

**4.ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԿԱՐԳՈՎ
ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼԸ**

Համապատասխան մարմիններում թափուր կամ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում մեկամսյա ժամկետում համապատասխան մարմինների ղեկավարների փոխադարձ համաձայնությամբ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը քաղաքացիական ծառայողի համաձայնությամբ մինչև երեք տարի ժամկետով քաղաքացիական ծառայողին կարող է գործուղել այլ համապատասխան մարմին հավասարազոր քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար: Տվյալ դեպքում քաղաքացիական ծառայողը իրականացնելու է նույնաբովանդակ աշխատանք, ինչպիսին իրականացնում էր մինչև գործուղումը:

Քաղաքացիական ծառայության թափուր կամ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում գործուղման կարգով քաղաքացիական ծառայության պաշտոնը զբաղեցնելու գործընթացն սկսելու նպատակով համապատասխան մարմնի ղեկավարը գրությամբ դիմում է այլ համապատասխան մարմնի ղեկավարին՝ նշելով այդ մարմնի այն քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը, հայրանունը, զբաղեցրած պաշտոնը, գործուղման ժամկետը և գործուղման արդյունքում զբաղեցվող պաշտոնը:

Օրինակ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն նախարար

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասի՝ խնդրում եմ Ձեր համաձայնությունն Առողջապահության նախարարության միջազգային հարաբերությունների վարչության ավագ մասնագետ (պաշտոնի ծածկագիրը) Կարինե Համլետի Ասատրյանին 2019 թվականի ապրիլի 1-ից երկու տարի ժամկետով գործուղել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ սոցիալական աջակցության վարչության ավագ սոցիոլոգի (պաշտոնի ծածկագիրը) պաշտոնը գործուղման կարգով զբաղեցնելու համար:

(ստորագրություն)
---- (ամիս, ամսաթիվ)

(անուն, ազգանուն)

Համապատասխան մարմնի ղեկավարը քաղաքացիական ծառայողի գործուղմանը համաձայն չլինելու դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում հիմնավոր պատճառաբանությամբ գրավոր մերժում է դիմումը:

Օրինակ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ ՏԻԿԻՆ ԶԱՐՈՒՀԻ ԲԱԹՈՅԱՆԻՆ**

Հարգելի տիկին նախարար

Հաշվի առնելով, որ ներկայումս Առողջապահության նախարարության միջազգային հարաբերությունների վարչությունը գերծանրաբեռնված է, վարչության ավագ մասնագետ (պաշտոնի ծածկագիրը) Կարինե Համլետի Ասատրյանը կազմակերպում, համակարգում է վարչության ընթացիկ աշխատանքները և Կարինե Համլետի Ասատրյանի բացակայությունը կիսաթարի վարչության բնականոն գործունեությունը, ուստի ներկայումս չենք կարող Ձեր խնդրանքը բավարարել:

(ստորագրություն)
---- (ամիս, ամսաթիվ)

(անուն, ազգանուն)

Դիմող համապատասխան մարմնի ղեկավարի համաձայնության դեպքում համապատասխան մարմնի ղեկավարը հանձնարարական է տալիս անձնակազմի կառավարման ստորաբաժանմանը՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում գործուղման ընթացքն ապահովելու համար: Համապատասխան հանձնարարականն

ստանալուց հետո անձնակազմի կառավարման ստորաբաժանումը գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու որոշման մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարին և գործուղման ենթակա քաղաքացիական ծառայողին՝ վերջինիս համաձայնությունը ստանալու համար: Եթե քաղաքացիական ծառայողը գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ չի տալիս համաձայնություն, ապա գործուղում չի իրականացվում, եթե տալիս է համաձայնություն, ապա անձնակազմի կառավարման ստորաբաժանումը երեք աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում և պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հաստատմանն է ներկայացնում այլ համապատասխան մարմին թափուր կամ ժամանակավոր թափուր պաշտոնի գործուղելու մասին անհատական իրավական ակտի նախագիծը:

Օրինակ՝

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Առողջապահության նախարարության միջազգային հարաբերությունների վարչության ավագ մասնագետ (պաշտոնի ծածկագիրը) Կարինե Համլեյրի Ասատրյանս, տալիս եմ իմ համաձայնությունը գործուղման կարգով նշանակվելու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ սոցիալական աջակցության վարչության ավագ սոցիոլոգի թափուր պաշտոնին (պաշտոնի անվանումը, ծածկագիրը):

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

---- (ամիս, ամսաթիվ)

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն քաղաքացիական ծառայողների գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու մասին որոշումն ընդունում է գործուղումն իրականացնելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ:

Օրինակ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՀՐԱՄԱՆ N -Ա**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆ ԶՔԱՂԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասով, ---կանոնադրության ---- կետով, հիմք ընդունելով Առողջապահության նախարարի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի ապրիլի 5-ի փոխադարձ համաձայնությունը, ինչպես նաև Առողջապահության նախարարության միջազգային հարաբերությունների վարչության ավագ մասնագետ (պաշտոնի ծածկագիրը) Կարինե Համլեյրի Ասատրյանի 2019 թվականի ապրիլի 10-ի գրավոր համաձայնությունը՝

հրամայում եմ.

1. Առողջապահության նախարարության միջազգային հարաբերությունների վարչության ավագ մասնագետ (պաշտոնի ծածկագիրը) Կարինե Համլեյրի Ասատրյանին 2019 թվականի ապրիլի 11-ից մինչև 2022 թվականի ապրիլի 11-ը գործուղել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ սոցիալական աջակցության վարչության ավագ սոցիոլոգի թափուր պաշտոնը (պաշտոնի ծածկագիրը) գործուղման կարգով զբաղեցնելու համար:

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

---- (ամիս, ամսաթիվ)

Համապատասխան անհատական իրավական ակտն ընդունելուց հետո համապատասխան մարմնի ղեկավարը ընդունված անհատական իրավական ակտի պատճենը կից գրությամբ երեք աշխատանքային օրվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ուղարկում է քաղաքացիական ծառայողի գործուղման համար

դիմաձ համապատասխան մարմնի ղեկավարին: Գործուղման համար դիմաձ համապատասխան մարմնի ղեկավարը, ստանալով անհատական իրավական ակտի պատճենը, գործընթացն սկսելու վերաբերյալ համապատասխան հանձնարարական է տալիս անձնակազմի կառավարման ստորաբաժանմանը՝ օրենքով սահմանված կարգով գործուղված քաղաքացիական ծառայողի համապատասխան պաշտոնի նշանակման ընթացքն ապահովելու համար: Անձնակազմի կառավարման ստորաբաժանումը, ստանալով համապատասխան հանձնարարականը, երեք աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում և պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հաստատմանն է ներկայացնում գործուղվող քաղաքացիական ծառայողի գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու մասին անհատական իրավական ակտի նախագիծը:

Գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու համար դիմաձ համապատասխան մարմնի ղեկավարը գործուղվող քաղաքացիական ծառայողի գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու մասին ընդունված անհատական իրավական ակտի պատճենը կից գրությամբ երեք աշխատանքային օրվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ուղարկում է այն համապատասխան մարմին, որտեղից գործուղվել է քաղաքացիական ծառայողը:

Քաղաքացիական ծառայողի գործուղման ժամկետը կարող է երկարաձգվել համապատասխան մարմինների ղեկավարների փոխադարձ համաձայնությամբ: Այս դեպքում գործուղման ժամկետի ավարտից առնվազն երկու ամիս առաջ համապատասխան մարմինների ղեկավարների փոխադարձ համաձայնությամբ օրենքով սահմանված կարգով երկարաձգվում է գործուղման ժամկետը՝ հաշվի առնելով նաև գործուղման համար Օրենքով սահմանված մինչև երեք տարի ժամկետը, իսկ ժամկետը չերկարաձգելու դեպքում համապատասխան մարմնում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն ընդունում է գործուղման կարգով պաշտոն զբաղեցրած քաղաքացիական ծառայողին իր նախկին պաշտոնը զբաղեցնելու վերաբերյալ անհատական իրավական ակտ:

Օրինակ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

ՀՐԱՄԱՆ N -Ա

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասով, հիմք ընդունելով ---կանոնադրության ---- կետը՝

հրամայում եմ.

1. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական աջակցության վարչության ավագ մասնագետի թափուր պաշտոնին գործուղված Կարինե Համլետի Ասատրյանին ազատել զբաղեցրած պաշտոնից և հետ ուղարկել Առողջապահության նախարարության տրամադրության տակ:

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

---- (ամիս, ամսաթիվ)

Բացի գործուղման ժամկետը երկարաձգելուց, մինչև գործուղման ժամկետի լրանալը համապատասխան մարմինների ղեկավարների փոխադարձ համաձայնությամբ կարող է վաղաժամկետ դադարեցվել քաղաքացիական ծառայողի գործուղումը: Նման անհրաժեշտություն առաջանալու դեպքում համապատասխան մարմնի ղեկավարը գրավոր դիմում է մյուս համապատասխան մարմնի ղեկավարին՝ առաջարկելով վաղաժամկետ դադարեցնել քաղաքացիական ծառայողի գործուղումը:

Օրինակ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ ՏԻԿԻՆ ԶԱՐՈՒՀԻ ԲԱԹՈՅԱՆԻՆ**

Հարգելի տիկին նախարար

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասի՝ խնդրում եմ Ձեզ վաղաժամկետ դադարեցնել Առողջապահության նախարարության միջազգային հարաբերությունների վարչության ավագ մասնագետ (պաշտոնի ծածկագիրը) Կարինե Համլետի Ասատրյանի՝ 2019 թվականի ապրիլի 1-ից երկու տարի ժամկետով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական աջակցության վարչություն գործուղումը:

(ստորագրություն)

--- (ամիս, ամսաթիվ)

(անուն, ազգանուն)

Եթե համապատասխան մարմինների ղեկավարներից որևէ մեկը համաձայն չէ վաղաժամկետ դադարեցնել քաղաքացիական ծառայողի գործուղումը, այդ համապատասխան մարմնի ղեկավարը երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր մերժում է դիմումը՝ իր անհամաձայնության մասին տեղեկացնելով մյուս համապատասխան մարմնի ղեկավարին, իսկ եթե համապատասխան մարմինների ղեկավարները համաձայն են վաղաժամկետ դադարեցնել քաղաքացիական ծառայողի գործուղումը, ապա գործուղած համապատասխան մարմնում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն ընդունված անհատական իրավական ակտում փոփոխություն է կատարում քաղաքացիական ծառայողի գործուղումը դադարեցնելու վերաբերյալ, իսկ գործուղված համապատասխան մարմնում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իր ընդունած անհատական իրավական ակտում է փոփոխություն կատարում քաղաքացիական ծառայողի գործուղումը դադարեցնելու վերաբերյալ:

Օրինակ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

ՀՐԱՄԱՆ N -Ա

ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասով, հիմք ընդունելով ---կանոնադրության ---- կետը՝

հրամայում եմ.

1. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական աջակցության վարչության ավագ սոցիոլոգի թափուր պաշտոնին գործուղված Կարինե Համլետի Ասատրյանի գործուղումը վաղաժամկետ դադարեցնել և հետ ուղարկել Առողջապահության նախարարության տրամադրության տակ:

(ստորագրություն)

---- (ամիս, ամսաթիվ)

(անուն, ազգանուն)

**5.ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՊԱՇՏՈՆ
ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ**

Տեղափոխման կամ փոխադրման կամ գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու գործընթացն իրականացնելու համար առկա են որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես՝ տեղափոխության կամ փոխադրման կամ գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելն իրականացվում է հաշվի առնելով քաղաքացիական ծառայողի նախորդ տարվա կատարողականի գնահատման կամ հաշվետվության արդյունքները: Եթե քաղաքացիական ծառայողի կատարողականի գնահատման արդյունքները կառավարության որոշմամբ սահմանված ցուցանիշից

ցածր են կամ հաշվետվությունը բացասական է գնահատված, ապա այդ քաղաքացիական ծառայողը չի կարող տեղափոխության կամ փոխադրման կամ գործուղման կարգով պաշտոն զբաղեցնել:

Տեղափոխության կամ փոխադրման կամ գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու ենթակա չեն այն քաղաքացիական ծառայողները, ովքեր այդ պաշտոնը զբաղեցնում են ժամկետային աշխատանքային պայմանագրով, այսինքն, եթե քաղաքացիական ծառայողը տվյալ պաշտոնն զբաղեցնում է ժամկետային աշխատանքային պայմանագրով, ապա այդ քաղաքացիական ծառայողը չի կարող տեղափոխության կամ փոխադրման կամ գործուղման կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնել:

Տեղափոխության կամ փոխադրման կամ գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու ենթակա չեն նաև այն քաղաքացիական ծառայողները, ովքեր գտնվում են՝

- 1) հղիության և ծննդաբերության արձակուրդում.
- 2) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում.
- 3) ժամանակավոր անաշխատունակության մեջ.
- 4) ամենամյա արձակուրդում.
- 5) փորձաշրջանում.
- 6) զինվորական ծառայության մեջ.
- 7) եռամսյա ժամկետը գերազանցող վերապատրաստման կամ

ծառայողական գործուղման մեջ:

Բացի այդ, հղիության և ծննդաբերության արձակուրդում, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում, ինչպես նաև զինվորական ծառայության մեջ գտնվող քաղաքացիական ծառայողների փոխադրումը կարող է իրականացվել համապատասխան արձակուրդից կամ զինվորական ծառայությունից վերադառնալուց ոչ շուտ, քան վեց ամիս հետո:

**6.ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՊԱՇՏՈՆ
ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Տեղափոխության կամ փոխադրման կամ գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու դեպքերում քաղաքացիական ծառայողների համար Օրենքով նախատեսված են որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես՝ այդ գործընթացներն իրականացվում են քաղաքացիական ծառայության միայն հավասարազոր պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների միջև, այսինքն՝ տեղափոխության կամ փոխադրման կամ գործուղման կարգով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները պետք է զբաղեցնեն քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում քաղաքացիական ծառայության պաշտոնի համապատասխան խմբի նույն ենթախմբում ընդգրկված քաղաքացիական ծառայության պաշտոն:

Տեղափոխության կամ փոխադրման կամ գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու դեպքերում քաղաքացիական ծառայողների հետ վերջնահաշվարկ չի կատարվում, հիմնական աշխատավարձը սահմանվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված կարգով, ընդ որում այդ գործընթացների իրականացումը չի հանգեցնում քաղաքացիական ծառայողների հիմնական աշխատավարձի չափի նվազեցման: Բացի այդ, տեղափոխության կամ փոխադրման կամ գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու դեպքերում քաղաքացիական ծառայողների համար չի սահմանվում փորձաշրջան, իսկ դասային աստիճանի համար նախատեսված հավելավճարը պահպանվում է:

Տեղափոխության կամ փոխադրման կամ գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու համար էական է նաև քաղաքացիական ծառայողների գրավոր համաձայնությունը: Բացառություն է նախատեսված միայն անհաղթահարելի ուժի՝ արտակարգ և (կամ) անկանխելի հանգամանքներով պայմանավորված դեպքերում, երբ տեղափոխություն և (կամ) փոխադրում իրականացնելիս քաղաքացիական ծառայողի գրավոր համաձայնություն չի պահանջվում: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, ինչպես նաև արտակարգ բնույթ կրող այլ իրավիճակներ: Անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքների վերացումից

անմիջապես հետո քաղաքացիական ծառայողները զբաղեցնում են նախքան տեղափոխությունը և (կամ) փոխադրումը իրենց զբաղեցրած պաշտոնը:

Տեղափոխության կամ փոխադրման կամ գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու դեպքերում քաղաքացիական ծառայողների համար սահմանված երաշխիքներից է նաև այն, որ համապատասխան մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության ժամանակ, եթե կրճատվում ու անվանացանկից հանվում է տեղափոխված կամ ժամանակավոր թափուր պաշտոնի փոխադրված քաղաքացիական ծառայողի պաշտոնը, ապա նախքան վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության գործընթացն սկսելը քաղաքացիական ծառայողները պետք է զբաղեցնեն իրենց նախկին պաշտոնները, իսկ գործուղման դեպքում, եթե համապատասխան մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության արդյունքում անվանացանկից հանվում է գործուղված քաղաքացիական ծառայողի պաշտոնն, ապա համապատասխան մարմինը նոր անվանացանկում նախատեսում է գործուղված քաղաքացիական ծառայողի պաշտոնին հավասարազոր կամ ցածր պաշտոն: Տվյալ պաշտոնը համարվում է որոշակի ժամկետով թափուր (մինչև գործուղման ժամկետի ավարտը կարող է զբաղեցվել Օրենքով սահմանված կարգով: Գործուղման ժամկետի ավարտից հետո գործուղված քաղաքացիական ծառայողին առաջարկվում է նոր անվանացանկով նախատեսված հավասարազոր կամ ցածր պաշտոնը: Եթե քաղաքացիական ծառայողը չի տալիս համաձայնություն առաջարկված պաշտոնում նշանակվելու համար, ապա նա Օրենքով սահմանված կարգով գրանցվում է կադրերի ռեզերվում:

Բացի այդ, գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու դեպքում մինչև գործուղման ժամկետի ավարտը տվյալ պաշտոնի համար մրցույթ չի հայտարարվում, իսկ գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու դեպքում մինչև գործուղման ավարտը գործուղված քաղաքացիական ծառայողի ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցվում է փոխադրման կարգով կամ գործուղված քաղաքացիական ծառայողի պարտականությունները կատարում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողը:

Մշտական բնակության վայրից դուրս քաղաքացիական ծառայողի գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու դեպքում օրենսդրությամբ սահմանված չափերով և կարգով քաղաքացիական ծառայողին տրվում է ծախսերի փոխհատուցում: Գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու ընթացքում քաղաքացիական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձի լիազորությունները, այդ թվում՝ պարզևատրումը իրականացնում է այն համապատասխան մարմնի պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, որտեղ գործուղվում է քաղաքացիական ծառայողը: